«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ»

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Աղավնի Չինարյան

Ուսումնական հաստատություն՝ Պարտիզակի Ահարոնի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ առաջին. Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակը, խնդիրները, բովանդակությունը

Էկոլոգիական կրթության և դաստիարակության բովանդակությունը…….5

Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակը……6

Էկոլոգիական կրթության և դաստիարակության խնդիրները……..7

Էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման միջոցները…….8

Գլուխ երկրորդ.Սովորողների էկոլոգիական դաստիարակությունը հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում

Էկոլոգիական կրթության բովանդակությունը, նպատակը և խնդիրները կրտսեր դպրոցում……10

Էկոլոգիական կրթության բովանդակությունը հիմնական դպրոցում…….16

Էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգը ավագ դպրոցում…21

Եզրակացություն……24

Գրականության ցանկ……25

Ներածություն

Էկոլոգիական դաստիարակությունը էկոլոգիական մշակույթի անբաժանելի մասն է: Շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ բնության հետ փոխներգործության ընթացքում:

Թեմայի արդիականությունը.

Ժամանակակից աշխարհում, երբ օրեցօր մեծանում է հասարակության ներգործությունը շրջակա միջավայրի վրա, այժմ առավել քան արդիական է դառնում հասարակության էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը:

Այսօր մարդկությունը կանգնած է կարևոր խնդրի առջև.փոխել սեփական վերաբերմունքը բնության հանդեպ, ձևավորել էկոլոգիապես կրթված և դաստիարակված հասարակություն, որպեսզի խուսափենք էկոլոգիայի վրա անցանկալի ազդեցություններից, որոնք վտանգավոր կլինեն առողջության և կյանքի համար, ժամանակակից մարդը պետք է զիված լինի տարրական էկոլոգիական գիտելիքներով և նոր էկոլոգիական մտածողությամբ: Արդի ժամանակաշրջանում էկոլոգիական հիմնախնդիրը ստացել է գլոբալ բնույթ: [6,էջ 1]

Մարդկությանը անհրաժեշտ են նոր գիտելիքներ, նոր մեթոդներ, որպեսզի ստեղծվի էկոլոգիապես դաստիարակված հասարակություն: Այժմ դպրոցների հիմնախնդիրն է տալ հասարակությանը տեսական և գործնական այնպիսի տեղեկատվություն, որպեսզի ստեղծվի էկոլոգիայի հետ փոխհամաձայնեցված հասարակություն:

Թեմայի նպատակներն ու խնդիրներն են՝

- Ներկայացնել էկոլոգիայի կարևոր դերը մարդկության կյանքում
- Պարզաբանել էկոլոգիական խնդիրները
- Ներկայացնել էկոլոգիական դաստիարակության կարևորությունը և արդիականությունը
- Էկոլոգիական դաստիարակության դերի գնահատումը հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում
- Դպրոցի և ուսուցչի կարևոր դերի գիտակցումը էկոլոգիական դաստիարակության հարցում:

Գլուխ 1.Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակը, խնդիրները, բովանդակությունը

Էկոլոգիական կրթության և դաստիարակության բովանդակությունը

Անձի էկոլոգիական կրթությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է, որը բխում է «Մարդ- հասարակություն- բնություն» փոխազդեցության պահանջներից:

Շատ երկրների համար դպրոցական էկոլոգիական կրթության հիմնախնդիրը առավել արդիական է: Դա են հաստատում աճող սերնդի էկոլոգիական դաստիարակության տեսության և պրակտիկայի հարցերին նվիրված ազգային և միջազգային համաժողովների փաստաթղթերն ու նյութերը, առանձին երկրների կառավարական որոշումները, որոնցում նշվում է էկոլոգիական համընդհանուր ուսուցման կարևորությունը:

Էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է դպրոցականների մեջ բնության, շրջակա միջավայրի մասին հասկացությունների ձևավորմանը, գիտելիքների հարստացմանը, բնության հետ ներդաշնակվելու ձգտման որակների դաստիարակման, դա էլ իր հերթին հարստացնում և ապահովում է ընդհանուր դաստիարակության ողջ գործընթացը: Այն պետք է իրականացնել սկսած վաղ մանկական տարիքից՝ ընտանիքում, նախակրթական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում և արտադպրոցական հիմնարկներում: Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային գործոնը էկոլոգիական կրթությունն է, որը տրվում է ուսումնական առարկաների՝ բնագիտության, բուսաբանության, կենսաբանության, աշխարհագրության, գրականության և այլ առարկաների միջոցով: Երկրորդ գործոնը՝ բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրումն է բնապահպանական հատուկ խմբերում և ընկերություններում:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակը

Էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակն է աճող սերնդին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանել բնության կարևորագույն օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել ու վերարտադրել բնությունը: Անհրաժեշտ է մանկական տարիքից նպատակաուղղված ձևով դաստիարակել պատասխանատվություն մեզ շրջապատող միջավայրի նկատմամբ: [7, էջ 1]

Դասական բանաձևմամբ՝ էկոլոգիական դաստիարակությունն ու կրթությունը անհատի ձևավորման կարևորագույն բաղադրամասն են, որով անձը դաստիարակվում է շրջակա միջավայրի նկատամամբ ունեցած ճիշտ վերաբերմունքի պահանջներով: Հատկապես մեր ժամանակներում հսկայական նշանակություն է ստանում աճող սերնդին բնության, շրջակա միջայրի պահպանման, խելացի օգտագործման, վերարտադրման բնական նորմերով դաստիարակումը, որպեսզի ապահովվի մարդկանց կենսագործունեությունը: Էկոլոգիական դաստիարակության ու կրթության կարևոր միջոց է ուսումնական հաստատություններում ուսումնական և արտաուսումնական համալիր միջոցառումների անցկացումը բուսական ու կենդանական աշխարհի, օդային, ջրային ավազանների պահպանության գործում:

Կրթության և դաստիարակության ռազմավարական նպատակ պետք է լինի էկոլոգիական աշխրարհայացքի ձևավորումը, որի հիմքում ընկած են էկոլոգիական գիտելիքները, կուլտուրան և էթիկան: Ընթանիքներում, նախադպրոցական հիմնարկներում հարկավոր է երեխաների մեջ ըստ ամենայնի սեր սերմանել բնության հանդեպ, իսկ դպրոցում, բուհում ուսումնասիրվող բոլոր առարկաներն անխտիր պետք է ներթափանցված լինեն էկոլոգիական գիտելիքներով: [2,էջ192]

Էկոլոգիական դաստիարակությունը մանկավարժական գործընթացի մի մասն է, և նրա համալիր բնույթից էլ բխում են նրա հիմնախնդիրները՝

- ‹‹մարդ-հասարակություն-բնություն›› ամբողջական համակարգի նկատմամբ դպրոցականների անհատական վերաբերմունքի, բնության հետ շփվելու պահանջմունքի, պատասխանատվության և էկոլոգիական աշխարհայացքի ձևավորում:
- իր և ուրիշների առողջության՝ որպես հասարակական արժեքի պահպանման նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում
- շրջակա միջավայրի գեղագիտական ընկալում և գնահատում:
- բնության խնայողության անհրաժեշտության համոզմունքների ձևավորում
- բնապահպանական գործունեության դրդապատճառների և դիրքորոշումների ձևավորում՝ ուղղված բնության բազմակողմանի արժեքների գիտակցմանը
- բնության հետ հարաբերությունների կարգավորում
- էկոլոգիական գիտակցության և էկոլոգիական կուլտուրայի ձևավորում

Էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման միջոցները

Էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման միջոցներն են՝

- Ինտերակտիվ արտադասարանական միջոցառումների կազմակերպում՝ վիկտորինաներ, օիմպիադաներ:
- Դասի անցկացում էկոլոգիական միջավայրում, էկոլոգիական էքսկուրսիաների կազմակերպում:
- Առարկաների և էկոլոգիայի միջև միջառարկայական կապի ստեղծում դասապրոցեսի ընթացքում:
- Աշակերտների ուշադրության հրավիրում էկոլոգիական հիմնախնդիրների վրա դասապրոցեսի ընթացքում: [6,էջ 2]
- Անձի էկոլոգիական դաստիարակության սկզբանական փուլերը կամ միջոցներն են ընտանիքը, նախադպրոցական հաստատությունները և դպրոցը՝ իրենց դերով կարևոր, քանի որ դրանց միջոցով է առաջին հերթին սկսվում ապագա լիարժեք քաղաքացու ձևավորումը:Եթե հուսալի է սկիզբը, ապա ընթացքն էլ բարեհաջող կլինի:
- Էկոլոգիական դաստիարակությունն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է այս ոլորտում որակական փոփոխությունների դիմել: Չի կարելի աշակերտի բավարարել էկոլոգիական որոշակի գիտելիքներ փոխանցելով, հարկավոր է նաև առաջարկել ու ցուցադրել մարդու բարոյաէկոլոգիական դիրքորոշման և գործունեության օրինակներ:
- Էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցներ են հանդիսանում նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները: Դրանց մեջ են մտնում մանկական գրականությունը, թերթերը, հոդվածները, հեռուստատեսությունը, ռադիոն, որոնք նպաստում են բնության պահպանությանը և նրա հանդեպ խնայողական վերաբերմունքի ձևավորմանը: [5,էջ 607]
- ՀՀ-ում էկոլոգիական կրթության և դաստիարկության ձևավորմանը նաև նպատում է 2001 թվականից ընդունված «Ազգաբնակչության էկոլգիական կրթության և դաստիարակության մասին» օրենքը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունում բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու՝ մարդու սահմանադրական իրավունքի եւ կարևորագույն պետական խնդրի՝ էկոլոգիական ապահովման նպատակով շրջակա բնական միջավայրի պահպանության գործում յուրաքանչյուրի սահմանադրական պարտականությունների իրականացումը պահանջում է քաղաքացիների էկոլոգիական բարձր կուլտուրա, որը ձեռք է բերվում էկոլոգիական անընդմեջ կրթության ընթացքում: [4,էջ1]

Գլուխ 2.Սովորողների էկոլոգիական դաստիարակությունը հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում

Էկոլոգիական կրթության բովանդակությունը, նպատակը և խնդիրները կրտսեր դպրոցում

Սովորողների, ընդհանրապես մարդու էկոլոգիական կուլտուրան նրա՝ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի պատասխանատվությունն է: Այն իրականություն դարձնելու համար դպրոցից, ընտանիքից, ողջ հասարակությունից պահանջվում է սովորողների հետ տանել ամենօրյա նպատակաուղղված աշխատանք: Առաջին հերթին զինել նրանց անհրաժեշտ գիտելիքներով: Օրինակ՝ գիտելիքներ բնության և հասարակության կապի, գիտելիքներ՝ բնության գոյության անհրաժեշտության, գիտելիքներ՝ բնությանը վերաբերվելու նորմերի մասին և այլն:

Հնարավոր է արդյոք նման գիտելիքներ տալ դպրոցականներին և ովքե՞ր պետք է տան: Այո՛, հնարավոր է: Այս աշխատանքը կարող են կատարել կատարել կենսաբանության, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, ֆիզկուլտուրայի ուսուցիչները, ընդհանրապես ողջ մանկավարժական կոլեկտիվը:

Սովորողների էկոլոգիական կուլտուրայի ձևավորման համար կարևոր դեր կարող են խաղալ նաև արտադասարանային և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքները:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է նախնական պատկերացում ունենա կենդանի և անկենդան մարմինների առանձնահատկությունների, դրանց փոխազդեցությունների, ինչպես նաև մարդու օրգանիզմի մասին, տարրական գաղափար ունենա շարժման, փոխազդեցության, ջերմության, լույսի, ձայնի մասին, ճանաչի իր շրջապատում տարածված կենդանիները, բույսերն ու սնկերը, տարրական գիտելիքներ ունենա մարդու և շրջակա միջավայրի և իր կյանքում բնական դերի մասին:

Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության նպատակը էկոլոգիական մտածողության սկզբնական տարրական հենքի ձևավորումն է, որը որոշակի պարզ գիտելիքների՝ բնության օրենքների, էկոլոգիական հասկացությունների, բնության մեջ իր տեղի գիտակցման, բնության նկատմամբ պատասխանատվության նորմերի յուրացման, էկոլոգիական մշակույթի, էկոլոգիական գործունեության հմտությունների ձևավորման գործընթաց է:

Կրտսեր դպրոցում էկոլոգիական կրթության խնդիրներն են՝

Ուսուցման ոլորտում՝ սովորողների ծանոթացում էկոլոգիական գիտելիքների հիմունքներին, սկզբնական էկոլոգիական հասկացությունների յուրացում:

Դրդապատճառային ոլորտում՝ էկոլոգիա առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրության, էկոլոգիական գիտելիքների պահանջմունքների զարգացում.

Էկոլոգիական կրթության կարևորագույն սկզբունքներն են՝

<u>Հաջորդայնությունը՝</u> բնության աշխարհի, մարդու աշխարհի, էկոլոգիական պարզագույն հասկացությունների վերաբերյալ գիտելիքներից շարժում դեպի ավելի բարդը, ավելի ընդարձակը,

<u>Ինտեգրացիան՝</u> էկոլոգիական տարրական գիտելիքների համադրում այլ առարկաների գիտելիքներին: [1, էջ 151-152]

Որպեսզի մարդը սովորի իրեն դիտել որպես բնության անտրոհելի մասնիկ, պետք է նրա մեջ էկոլոգիական աշխարհայացքային կուլտուրան ձևավորել մանկուց: Այս հարցում հատկապես կարևորվում է ընդօրինակման՝ որպես դեպի ենթագիտակցություն տանող «ուղիղ ճանապարհի» դերը: Ասվածը, առաջին հերթին, վերաբերում է իրեն՝ դաստիարակին, մանկավարժին, քանի որ երեխաներից շատերի համար հենց նա է ընդօրինակման կերպար: [2,էջ 223]

Երեխաների առաջնորդելով բնության աշխարհ, նրանց ծանոթացնելով շրջակա միջավայրի հիմնահարցերին՝ ուսուցիչը կարող է բացահայտել և խթանել յուրաքանչյուր երեխայի մեջ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են շիտակությունը, բարությունը, սերը, իմաստությունը, համբերությունը, կենսասիրությունը, գթասրտությունը, շրջակա միջավայրի հանդեպ երկյուղածությունը, դյուրազգացությունը, բարությունն ու հոգատարությունը:

Բնության ուսումնասիրությունը տարրական դասարաններում պետք է սկսել էքսկուրսիաներից և շարունակել դասերի և արտադասարանական միջոցառումների ժամանակ: Յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման ժամանակ պետք է կապ ստեղծել մեր ժամանակներում և մեր հանրապետությունում էկոլոգիական իրավիճակի հարցերի միջև: Երեխաները սովորում են բնության մեջ վարքի տարրական կանոններ: Անհրաժեշտ է, որքան հնարավոր է, դասերն անցկացնել բնության գրկում, սովորեցնել երեխաներին տեսնել գեղեցիկը իրենց շրջապատող միջավայրում և վերարտադրել տեսածը:

Կրտսեր դպրոցում դասավանդվող առարկաները՝ մայրենին, կերպարվեստը, մաթեմատիկան, երգեցողությունը, բնությունը, բովանդակային առումով նույպես պարունակում են էկոլոգիական տարրական գիտելիքներ: Ընդհանուր նշված առարկաներում միջառարկայական կապերը արտահայտվում են գիտելիքների ներթափանցմամբ:

Օրինակ՝ մայրենիի դասընթացում ներառված են՝

- Բնության երևույթներ
- Տարվա եղանակներ
- Բույսերի տեսակներ
- Կենդանիների տեսակներ
- Ծառատունկ (ինչով և ինչպես է կատարվում այն)
- Օգնություն բույսերին,կենդանիներին,նրանց խնամքը
- Երախտագիտություն
- Դերային խաղեր

Պարզվում է, որ այս տարիքում երեխային հասու է այն գաղափարը, որ ինքը չպետք է վնասի բնությանը:

<<Կերպարվեստ>> առարկայի միջոցով երեխաները յուրահատուկ կապ են ստեղծում շրջակա միջավայրի և իրենց երևակայության միջև: Աշխարհի, իրերի և երևույթների խոր ըմբռնումը և գիտելիքների կուտակումը ընթանում է թե՛ մտքի և թե՛ ձեռքի աշխատանքի միջոցով: Կերպավեստ առակայի ուսուցման շնորհիվ ընդարձակվում են երեխայի պատկերացումները և շրջապատի հետ նրա փոխհարաբերությունները:

Օրինակ՝ նկարել կենդանիներ, ծեփել կավե արձանիկներ, դասարանում քննարկում կազմակերպել նկարի նյութ դարձած կենդանու մասին կամ նկարել ծաղիկներ, սնկեր,

ծառեր: Նկարել արև, այգի: Տեղանքի կոլաժի (հավաքանկար) պատրաստում: Նկարել պատկերներ, որոնք պատրաստվում են փայտից: Այս աշխատանքների միջոցոցով 1-ին դասարանցները կիմանան կենդանիների, ծաղիկների, սնկերի, ծառերի տեսակների ու ձևերի, Արևի, Լուսնի, աստղերի մասին: Կփորձեն հիշել բնության մեջ հանդիպող պատկերներ, կիմանան, թե սարերն ու բլուրներն ինչ գույն են ստանում տարվա տարբեր եղանակներին այլն:

Էկոլոգիական դաստիարակության ձևավորմանը մեծապես նպաստում է տարրական դասարաններում ուսուցանվող ես և շրջակա աշխարհը առարկան:

«Ես և շրջական աշխարհը» առարկայի շրջանակներում երեխաները սովորում են հետևյալ հարցերի պտասխանները՝

- Ի՞նչն է որոշում մարդու տեղը բնության մեջ:
- Մարդու և բնության ներդաշնակությունը:
- Ինչպե՞ս մարդը պետք է պահպանի բնությունը:
- Կենդանի օրգանիզմների բազմաձևությունը և այլն:

Էկոլոգիական կրթության բովանդակությունը հիմնական դպրոցում

Անձի ձևավորման գործընթացում բնական միջավայրը և անձի ակտիվությունը որոշում են նրա գործունեության բնույթը և «մարդ-բնություն-հասարակություն» փոխազդեցության օրնաչափությունները: Այդ պատճառով առաջնային են համարվում սովորողի անձի ակտիվությունը, պահանջմունքադրդապատճառային ոլորտը, որոնք պայմանավորում են սովորողի էկոլոգիապես նպատակահարմար գործունեությունը, էկոբարոյական վարքագիծը: [3,էջ 11]

Կրթության սոցիալ-էկոլոգիական գործառույթի, հասարակության կողմից կրթական համակարգերին տրվող սոցիալական պատվերի իմաստավորումը ուսուցչին հնարավորություն է տալիս ձևակերպելու այն որպես հասարակության մեջ էկոլոգիական մշակույթի և էկոլգիական դաստիարակության վերարտադրում, անձի էկոլոգիական գիտակցության ձևավորում: Այդ սոցիալ-էկոլոգիական նոր գործառույթի իրականացումը ուսուցչի կողմից աշակերտին դարձնում է մշակույթի

նոր բաղադրամասի՝ էկոլոգիական գիտակցության ձևավորման կենտրոնացման օղակը:

Բնության պահպանության գաղափարները պետք է ներգրավվեն բոլոր ուսումնական առարկաներում: Այսօր նշանակալիորեն էկոլոգիականացվել են դպրոցում դասավանդվող բոլոր բնագիտական և կենսաբանական առարկաները (բնագիտությունը, կենսաբանությունը, աշխարհագրությունը, քիմիան, ֆիզիկան և այլն): Նրանց հիմնախնդիրը վերաբերում է կենդանի համակարգերի վրա միջավայրի տարբեր արտաքին գործոնների ազդեցության պայմաններին և հետևանքներին, շրջակա միջավայրի ուսումնասիրմանը, բնական պաշարների ռացիոնալ օգտագործմանը, պահպանմանն ու վերափոխմանը, բնակչության և տնտեսության ճիշտ տեղաբաշխմանը, մարդու գործունեության բոլոր հնարավոր հետևանքների կանխատեսմանը և այլն: Ուսուցիչը պետք է իմանա, թե ինչու որոշ երեխաներ բնությանը վերաբերվում են մեծ հետաքրքրությամբ և սիրով, բացասական արարքներ չեն կատարում, իսկ մյուսները իրենց բոլորովին այլ կերպ են դրսևորում: Ուսուցչի խնդիրն է, որ սովորողները հասկանան բնության և անձի ստեղծագործական ունակությունների միջև եղած կապերը, դրանց փոխհարաբերության բնույթը, որոնց վրա մինչ այժմ կրթության ու դաստիարակության տեսության մեջ և պրակտիկայում բավարար չափով ուշադրություն չի դարձվել:

Դեռահասության տարիքում բավականին բարձր է բնության մեջ պատճառահետևանքային կապերի, բնության հուզագեղագիտական ընկալումը: Հատկապես 5-8-րդ դասարանների աշակերտների ուսումնական գործունեության մեջ բնությունը հանդես է գալիս որպես իմացության առարկա, որտեղ ընթանում է էկոլոգիական հասկացությունների, էկոլոգիական գիտելիքների յուրացման գործընթացը:

Միջին դասարաններում էկոլոգիական կրթության կարևոր նպատակը՝ բնության ամբողջականության գաղափարի ըմբռնումն է: Բնության մեջ գործող կապերի իմացությունը կարևոր է որպես ճիշտ աշխարհաընկալման հիմք:

Էկոլոգիական կրթության ճիշտ դրվածք ապահովելու համար անհրաժեշտ է դասագործընթացում օգտագործել բոլոր միջառարկայական կապերը՝ աշակերտներին ցույց տալու համար գիտելիքների միասնականությունը, բնության գեղեցկությունը, նրա առողջարար ու գործնական նշանակությունը, նրանց մեջ

արթնացնել բնությունը պահպանելու ցանկություն՝ որպես կենսապահովման, գեղեցկության, երջանկության, ներշնչման աղբյուր, որպես մարդու գոյության հիմնական և միակ միջոց:

Միջառարկայական կապերով հնարավոր է ամբողջությամբ և բազմակողմանիորեն լուսաբանել բնության և հասարակության փոխհարաբերության գիտական հարցերի բովանդակությունը, կազմակերպել սովորողների բնապահպանական տարաբնույթ պրակտիկ գործունեություն: [1,էջ 181-185]

Ուսուցչի խնդիրն է կառավարել դպրոցականների բնության ճանաչմանը և ընկալմանը նպատակաուղղված պատկերավոր և տեսական մտածողության տարբեր մակարդակների անհատական գործընթացը:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է պատկերացում ունենա ուսումնական ծրագրերի էկոլոգիական ներուժի մասին: Դա առկա է հայ գրականության, բնության, բնագիտության, կենսաբանության, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի առարկայական ծրագրերում: Հատկապես այն առավել ընդգրկուն բնույթ է կրում միջին դասարանների բնագիտական առարկաների բովանդակության մեջ, որտեղ արծարծված էկոլոգիական խնդրները հանդես են գալիս որպես գիտելիքների հատուկ ձև, սոցիալական նոր իրականություն:

Սովորողների կողմից էկոլոգիական իրավունքի գիտակցումը ներառում է շրջակա միջավայրի մեջ իր վարքագծի ճիշտ դրսևորման, բնության, սոցիալ-տնտեսական, գեղագիտական և հոգևոր արժեքների գիտակցման, բնությունը որպես ազգային հարստություն ընկալելու ու նրա օգտագործման ուղղությամբ իր իրավունքների և պարտականությունների իմացության հարցերը:

Էկոլոգիական կրթությունը դպրոցում պետք է իրականացվի բնագիտական ցիկլի առարկաների բազայի վրա և շարունակական բնույթ կրի սկսած տարրական դպրոցից և շարունակվի հիմնական և ավագ դպրոցներում:

Օրինակ՝ 5-7-րդ դասարանների դեռահասների հետ տարվող աշխատանքերում ուսուցիչների գործունեությունը պետք է ուղղված լինի նրանց մեջ շրջակա միջավայրի պահպանման պահանջմունքի բացակայությամբ՝ պայմանավորված հնարավոր հետևանքների կանխատեսման կարողությունների ձևավորմանը, բնական պաշարների, հումքի, էներգիայի ռացիոնալ օգտագործման սովորույթի ամրապնդմանը և այլն: [1, էջ 211]

Դեռահաս դպրոցականների էկոլոգիական մշակույթի ձևավորմանը նպաստում են տարբեր արտաուսումնական, արտադպրոցական խմբակների, ցուցահանդեսների, էկոլոգիական-հայրենագիտական արշավների, բնապահպանական աշակերտական ընկերությունների մասնակցությունը:

Ուսուցչի խնդիրն է կառավարել դպրոցականների բնության ճանաչմանը և ընկալմանը նպատակաուղղված պատկերավոր և տեսական մտածողության տարբեր մակարդակների անհատական գործընթացը:

Հիմնական դպրոցում էկոլոգիական կրթության բովանդակությունը իրականացվում է ոչ միայն բնություն, բնագիտություն, կենսաբանություն առարկաների, այլ նաև աշխարհագրություն, կերպարվեստ, ֆիզիկա, քիմիա, երգեցողություն, տեխնոլոգիա գրականություն առարկաների միջոցով:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգը ավագ դպրոցում

Էկոլոգիական դաստիարակության պրակտիկան ցույց է տալիս, որ ավագ դպրոցականների էկոլոգիական գիտելիքների ձևավորումը իրականացվում է կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության դասերին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոչ բոլոր սովորողներն են սիրում նշված առարկաները և էկոլոգիական տեղեկատվություն կրող նյութերի նկատմամբ նրանց ցածր հետաքրքրությունը բացատրվում է ոչ միայն նրանով, որ այն չի համապատասխանում սովորողների հոգեկան պահանջմունքներին, այլ նաև նրանով, որ այդ նյութերը ուսուցիչների կողմից մատուցվում են ձևական, առանց հատուկ շեշտվածության և նպատակաուղղվածության: Այդ պատճառով էլ ավագ դպրոցականների էկոլոգիական գրագիտության հիմնական բովանդակությունը կազմում են միայն բնության վրա մարդու բացասական ազդեցության վերաբերյալ գիտելիքները: Հայ դպրոցներում էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը գտնվում են անբավարար վիճակում: Մարդու ներթափանցումն ինքնակարգավորվող կենսոլորտի համակարգի մեջ, որը ձևավորվել է միլիոնավոր տարիների ընթացքում, նրանից առանձնահատուկ գիտելիքներ, զգուշություն, շրջակա միջավայրի

անվտանգությունը երաշխավորող կանխատեսման բարձր հնարավորություններ է պահանջում: Ահա՛ թե ինչու էկոլոգիական կրթության և դաստիարակության հետագա խթանումը, վերջինիս տեսական նոր մակարդակի բարձրացումն օրվա հրամայական է դառնում: Կարելի է ասել, որ էկոլոգիական դաստիարակությունն ու կրթությունը մարդուն մարդկայնացնելու, նրան ինքն իրենից փրկելու, անասնական բնազդներից՝ սպանելու, ավերելու, կույր մոլուցքներից ազատագրելու նպատակ է հետապնդում: Էկոլոգիական դաստիարակությունը, որպես պարտադիր պայման, ելնում է տվյալ ազգային հանրության, կոնկրետ դեպքում՝ հայ ժողովրդի տարածաշրջանային-էկոլոգիական, ազգային-էթնիկական, մշակութային առանձնահատկություններից ու հոգեկերտվածքից: [8,էջ 1]

Ավագ դպրոցականների էկոլոգիական կրթության կազմակերպման արդյունավետության պայմաններն են՝ ուսուցչի մասնագիտական–մեթոդական պատրաստվածությունը, սովորողների անհատական առանձնահատկությունների հաշվառումը, բնության նկատմամբ սովորողների հոգատար վերաբերմունքը, նրա վերակառուցելու նպատակաուղղված գործունեությունն է, որով և արտահայտվում է բարոյագեղագիտական ընկալման, բնության պահպանության գիտական հիմունքների գիտակցումը: [1, էջ 278]

Ավագ դպրոցականների էկոլոգիական պատրաստվածության մակարդակի բարձրացման առաջնային գործոնը էկոլոգիական կրթությունն է, որն իրականացվում է ուսումնական առարկաների՝ ընդհանուր կենսաբանության , աշխարհագրության, բնօգտագործման և բնապահպանության հիմունքների, քիմիայի, ֆիզիկայի, գրականության և այլ առարկաների միջոցով:

Հանրակրթական դպրոցում ավագ դպրոցականների էկոլոգիական կրթության կազմակերպման ձևերն են՝ ուսումնական պարապմունքները՝ մոդուլային դասընթացների և թեմատիկ հատուկ առաջադրանքների կատարմամբ, էքսկուրսիաները, սոցիալ-բնական միջավայրում դաշտայի պրակտիկան, արտաուսումնական, արտադպրոցական, անհատական, խմբային և համընդհանուր աշխատանքները:[1, էջ 291]

Էկոլոգիական կրթության դասի օպտիմալացման նպատակով կարևոր նշանակություն ունեն դպրոցականների արտաուսումնական, արտադպրոցական գործունեության ձևերը:

Էկոլոգիական բովանդակությամբ արտաուսումնական, արտադպրոցական միջոցառումները կազմակերպելիս պետք է հաշվի առնել սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Ավագ դպրոցականներին կարելի է հանձնարարել բարդ աշխատանք՝ կազմել դպրոցի բակի լանդշաֆտի պլանը, էկոլոգիական տոների, էկոլոգիական խաղերի սցենարի կազմումը և այլն:

Ավագ դպրոցականների բնապահպանական գործունեության մեջ կարևոր դեր է խաղում նախաձեռնողական վերաբերմունքը շրջապատող բնական միջավայրի պահպանման աշխատանքներում, կամավոր մասնակցությունը, դրանց էկոլոգիական իրավիճակների լուծումը, մինչը վերջ բարենպաստ արդյունքի հասցնելու ցանկությունն ու կամքը:

Ուսուցիչը աշակերտներին պետք է պատկերացում տա Հայաստանում ստեղծված արգելոցների, արգելավայրերի, ազգային պարկի մասին, վերջին տասնամյակում Հայաստանում ընդունված «բնության և պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքները», «Անտառային օրենսգիրքը», «Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքը», «Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքը» և մի շարք այլ օրենքների ու օրենսդրական ակտերի մասին: Էկոլոգիական կրթությանը ու դաստիարակությանը մեծապես նպաստում են դպրոցում ճաշակով կահավորված կենսաբանության կաբինետը, կենդանի անկյունը, դպրոցամերձ հողամասը: Դասագրքից դուրս փաստական նյութի և օրինակների օգտագործումը բարձրացնում է բնապահպանական գիտական գիտելիքների մակարդակը, աճում է հետաքրքրությունը կենսաբանության նկատմամբ: [1, էջ 294-297]

Եզրակացություն

Այսպիսով՝ էկոլոգիական դաստիարակությունը անմիջապես կախված է էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից: Էկոլոգիական դաստիարակությունը չափանիշ է համարվում մարդու գործնական և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ և այդ վերաբերմունքի համապատասխանեցումը հասարակական նորմերին:

Նպատակաուղղված մանկավարժական գործընթացի պայմաններում էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն :

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան որակները, բնության նկատմամբ հետաքրքրությունը,արժեքային դիրքորոշումներն ու հարաբերությունները:

Արդի ժամանակաշրջանում էկոլոգիական կրությանն և դաստիարակությանը հատկացվում է մեծ ուշադրություն, սակայն այն բավական չէ էկոլոգիապս կրթված և դաստիարակված սերունդ ձևավորելու համար: Հանրակրթական դպրոցը պետք է աշխատի այս ուղղությամբ՝ ստեղծելով նոր մեթոդներ և միջոցներ, որպեսզի էկոլոգիական մշակույթը մտցնի յուրաքանչյուր աշակերտի առօրյա

Գրականության ցանկ

1. Ասատրյան Լ.Թ., Էկոլոգիական դաստիարակության հիմունքները, Երևան,2009թ. :

2. Հովսեփյան , Մարուխյան , «Անձի էկոլոգիական կուլտուրա», Երևան,2005թ.:

3. Կարապետյան Ն. Զ. ,«Սովորողների էկոլոգիական կրթության և դաստիարակության առանձնահատկությունները հիմնական դպրոցում», Երևան,2014թ. :

4. ՀՀ օրենքը ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին-Երևան,2001թ. :

5.Лихачев Б.Т.Педагогика: Курс лекций / Учеб. пособие для студентов педагог, учеб.заведений и слушателей ИПК и ФПК. — 4-е изд., перераб. и доп. — М.:Юрайт-М,2001.—607с.

6.С.В. Чеботникова – «Экологическое воспитание школьников»/ статья/2011 г.

7. Ա. Ներկարարյան-«Էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցները և ուղիները դպրոցում»: Էլ. աղբյուր՝ http://kantegh.asj-oa.am/437/1/234-237.pdf

8. Հասկացություն էկոլոգիայի մասին, նպատակը և խնդիրները: Էլ. աղբյուր՝ http://fliphtml5.com/mmei/plme/basic